**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀՀ ԿԱ ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՇԵՆՔԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**
**N ՊԳԿՎ-ԳՀԱՇՁԲ-2018/1**

ք. Երևան «06» 06 2018թ.

ՀՀ ԿԱ պետական գույքի կառավարման վարչությունը, ի դեմս Վարչության աշխատակազմի ղեկավար Վ.Հարությունյանի, որը գործում է Վարչության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Լուսի-Արեգ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Հ. Մարտիրոսյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

**1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված ՀՀ ԿԱ պետական գույքի կառավարման վարչության աշխատակազմի վարչական շենքի հիմնանորոգման աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ 25.10.2018թ.:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

**2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ**

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

**3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝**

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանգիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

**3.2. Պատվիրատուն պարտավոր է՝**

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

**3.3. Կապալառուն իրավունք ունի՝**

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

**3.4. Կապալառուն պարտավոր է՝**

3.4.1 Աշխատանքները կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.10 Կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործված նյութերի երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները ներկայացված են պայմանագրի N 1.1 Հավելվածում:

3.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

## 4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը

տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

## 5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 25999998 (քսանհինգ միլիոն ինն հարյուր իննսունինն հազար ինն հարյուր իննսունութ) ՀՀ դրամ, որից 4333333 (չորս միլիոն երեք հարյուր երեսուներեք հազար երեք հարյուր երեսուներեք) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը :

5.4 Պայմանագրի շրջանակում կատարողական ակտերի դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳՏ=ՄԳ/ՆԳxԾԳՏxԾ, որտեղ՝

ՄԳ-ն Պայմանագրի 5.1 կետում նշված գինն է.

ՆԳ-ն շինարարական ծրագրի նախահաշվային գինն է.

ԾԳՏ-ն նախահաշվով ըստ աշխատանքի առանձին տեսակների համար սահմանված միավոր գինն է.

Ծ-ն կատարողական ակտերով ներկայացված աշխատանքի ծավալն է.

ՎԳՏ - նախահաշվով սահմանված առանձին տեսակների աշխատանքների դիմաց վճարվող գումարն է:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը[1]:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի

---

[1] *Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:*

Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Սույն պայմանագիրը կազմված է 5 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 1.1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

## 9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ ԿԱ ՊԳԿ վարչություն
ք. Երևան, Տիգրան Մեծի 4
ՀՀ ՖՆ աշխ. գործառ. վարչություն
Հ/Հ 900013000113
ՀՎՀՀ 02528489

---------------------------------------
**Վ.Հարությունյան**
(ստորագրություն)
Կ.Տ.

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**

«Լուսի-Արեգ» ՍՊԸ
Իրավ. հասցե ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գյուղ Գեղաքար
Գործ. հասցե ք. Երևան, Շիրակի 82
Կոնվերսբանկ ՓԲԸ
Հ/Հ 1930055884650100
ՀՎՀՀ 08805672

---------------------------------------
**Հ. Մարտիրոսյան**
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված թիվ 1
«.06» 06 2018 թ. կնքված
**ՊԳԿՎ-ԳՀԱՇՁԲ-2018/1** ծածկագրով պայմանագրի

# ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ[2]

## ՀՀ ԿԱ ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՇԵՆՔԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

| NN | Աշխատանքների անվանումը | չ/մ | ծավալը | Միավորի արժեքը | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| **1-1 Շինարարական աշխատանքներ** | | | | | |
| | **Քանդման աշխատանքներ** | | | | |
| 1 | Պրեսգրանիտե սալերից հատակի քանդում, ներառյալ շրիշակները | մ² | 64.5 | 0.50 | 32.52 |
| 2 | Դրսի աստիճանավանդակի եւ հարթակի քանդում /երկտավր եւ երկաթբետոն/ | մ³ | 3.78 | 27.19 | 102.77 |
| 3 | Պատերի մաքրում հին ներկից | մ² | 387 | 0.33 | 126.22 |
| 4 | Դռների ապամոնտաժում | մ² | 55.56 | 1.38 | 76.68 |
| 5 | Թեթեւաբետոնե բլոկերից միջնորմերի քանդում | մ² | 51.25 | 0.96 | 49.32 |
| 6 | Թուջե մարտկոցների ապամոնտաժում | հատ | 3 | 1.13 | 3.39 |
| 7 | Վարդակների եւ անջատիչների ապամոնտաժում | հատ | 27 | 0.16 | 4.40 |
| 8 | Պատուհանների ապամոնտաժում, ներառյալ պատուհանագոգերը | մ² | 21.7 | 2.36 | 51.18 |
| 9 | Ե/բ ծածկի սալի քանդում | մ³ | 7.4 | 27.19 | 201.18 |
| 10 | Ե/բ հեծանի քանդում | մ³ | 1.96 | 24.09 | 47.22 |
| 11 | Մուտքի ծածկի /մետաղական կարկաս, ալիկաթոնդե երեսապատումով/ ապամոնտաժում | մ² | 5 | 4.50 | 22.52 |
| 12 | Խեցեսալե հատակի քանդում | մ² | 32 | 0.50 | 16.13 |

[2] *Ծավալաթերթ-նախահաշիվը հրապարակվում է ներառյալ ըստ աշխատանքների կատարման արժեքների:*

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 13 | Ցեմենտ-ավազային հարթեցնող շերտի քանդում | $մ^2$ | 85.9 | 0.42 | 36.40 |
| 14 | Յախճապակի քանդում պատերից | $մ^2$ | 178.8 | 0.70 | 124.96 |
| 15 | Սվաղի քանդում | $մ^2$ | 658.8 | 0.91 | 598.55 |
| 16 | Կախովի առաստաղի քանդում | $մ^2$ | 32.6 | 0.80 | 25.98 |
| 17 | Զուգարանակոնքերի ապամոնտաժում | հատ | 6 | 0.71 | 4.28 |
| 18 | Լվացարանների ապամոնտաժում | հատ | 4 | 0.58 | 2.31 |
| 19 | Կրող պատի քանդում | $մ^3$ | 3.7 | 13.95 | 51.60 |
| 20 | Բազրիքների քանդում | գմ | 48 | 0.55 | 26.25 |
| 21 | Շին. աղբի հավաքում, բարձում եւ տեղափոխում 13կմ | տ | 44.4 | 3.32 | 147.24 |
| | **Միջնորմներ** | | | | |
| 1 | Միջնորմերի կառուցում թեթեւաբետոնե բլոկերից 15x20x40սմ | $մ^3$ | 2.42 | 24.66 | 59.68 |
| | **Դռներ** | | | | |
| 1 | Ալյումինե ջերմակամրջակով արտաքին դռների տեղադրում /ներառյալ ապակեպատումը, սարքերը, կողպեքները, ներկումը/ | $մ^2$ | 4.3 | 78.65 | 338.21 |
| 2 | Մետաղապլաստե ներքին դռների տեղադրում /ներառյալ սարքերը, կողպեքները, ներկումը/ | $մ^2$ | 53.7 | 46.26 | 2484.14 |
| 3 | Գոյություն ունեցող մետաղական դռան երեսապատում լամինատով | $մ^2$ | 1.23 | 5.06 | 6.23 |
| 4 | Գոյություն ունեցող մետաղական դռան երեսապատում լամինատով, փրփրապլաստե շերտով | $մ^2$ | 2.3 | 6.03 | 13.87 |
| | **Պատուհաններ** | | | | |
| 1 | Մետաղապլաստե երկշերտ ապակեպատ պատուհանների տեղադրում /ներառյալ ապակեփաթեթը, բռնակ փակիչը, սարքերը, ներկումը/ բացվող | $մ^2$ | 23.5 | 40.82 | 959.20 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 2 | Մետաղապլաստե երկշերտ ապակեպատ պատուհանների տեղադրում /ներառյալ ապակեփաթեթը, ներկումը/ չբացվող | մ² | 1.1 | 27.70 | 30.47 |
| 3 | Պատուհանագոգերի տեղադրում | մ² | 24.6 | 1.09 | 26.90 |
| 4 | Պլաստմասե պատուհանագոգերի արժեքը B=550մմ | գմ | 9.6 | 6.15 | 59.06 |
| | <u>Հատակներ</u> | | | | |
| 1 | Ցեմենտավազային շաղախից հարթեցնող շերտի պատրաստում 25մմ հաստությամբ | մ² | 192.1 | 1.15 | 220.40 |
| 2 | Պրեսգրանիտե հատակների իրականացում | մ² | 281.5 | 21.36 | 6012.04 |
| 3 | Խեցեսալե հատակների պատրաստում | մ² | 32 | 9.76 | 312.30 |
| 4 | Պրեսգրանիտե շրիշակների իրականացում | գմ | 240.8 | 2.41 | 581.27 |
| 5 | Պլաստմասե շրիշակների իրականացում | գմ | 4 | 0.74 | 2.95 |
| 6 | Մետաղական շեմերի տեղադրում | գմ | 22.6 | 1.22 | 27.67 |
| | <u>Հարդարման աշխատանքներ</u> | | | | |
| 1 | Պատերի եւ միջնորմների գաջե սվաղում բարձր որակի | մ² | 622.79 | 3.64 | 2264.83 |
| 2 | Շեպերի եւ թեքությունների գաջե սվաղում | մ² | 35.28 | 5.78 | 203.91 |
| 3 | Պատերի եւ միջնորմների յուղաներկում բարձր որակի, 1.6մ բարձրությամբ | մ² | 288.4 | 1.72 | 496.26 |
| 4 | Պատերի ներկում լատեքսային ներկով բարձր որակի, մածկապատումով | մ² | 751.4 | 2.05 | 1541.03 |
| 5 | Պատերի սվաղում ցեմենտ-ավազային շաղախով, հախճասալի տակ | մ² | 178.8 | 1.65 | 295.02 |
| 6 | Պատերի երեսապատում հախճասալով | մ² | 178.8 | 10.12 | 1809.79 |
| 7 | Դռների եւ պատուհանների շեպերի ներկում լատեքսային ներկով բարձր որակի, մածկապատումով | մ² | 19.24 | 1.84 | 35.46 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 8 | Կախովի առաստաղի պատրաստում «Արմստրոնգ» տիպի, մետաղական հիմնակմախքով | մ² | 29.9 | 6.83 | 204.14 |
| 9 | Կախովի առաստաղի պատրաստում շերտավոր պլաստիկից, մետաղական հիմնակմախքով | մ² | 32.6 | 5.69 | 185.47 |
| 10 | Միջանցքներում 1.6մ բարձրության վրա ՍՂՖ-ից պարակալների տեղադրում /8սմ լայնությամբ/ | գմ | 193 | 0.63 | 122.47 |
| | <u>Ծվաքարան</u> | | | | |
| 1 | Ծվաքարանի մետաղական հիմնակմախքի պատրաստում | տ | 0.053 | 169.38 | 8.98 |
| 2 | Քառակուսի կտրվածքի խողովակ □40x40x2.5մմ, L=8.4մ | տ | 0.024 | 520.81 | 12.50 |
| 3 | Քառակուսի կտրվածքի խողովակ □30x30x2մմ, L=17մ | տ | 0.029 | 543.71 | 15.77 |
| 4 | Մետաղական դյուբել-պտուտակներ Ø12մմ | հատ | 12 | 0.12 | 1.43 |
| 5 | Երեսապատում ալիկաբոնդով | մ² | 7.2 | 16.05 | 115.59 |
| 6 | Տանիքածածկի վերականգնում ցինկապատ մանրապրոֆիլային թիթեղից δ=0.55մմ | մ² | 6.5 | 7.63 | 49.57 |
| 7 | Գագաթնամասի իրականացում ցինկապատ հարթ թիեղից δ=0.55մմ | մ² | 3.5 | 4.16 | 14.56 |
| 8 | Առվակի պատրաստում | գմ | 54 | 1.83 | 98.97 |
| | <u>Այլ աշխատանքներ</u> | | | | |
| 1 | Նոր ալյումինե բազրիքների տեղադրում | գմ | 65.2 | 19.81 | 1291.39 |
| 2 | Գոյություն ունեցող բազրիքների յուղաներկում յուղաներքում 2 շերտ | մ² | 24 | 1.25 | 29.97 |
| 3 | Պատերի երեսապատում բազալտե սալերով 30մմ հաստությամբ | մ² | 2.7 | 28.96 | 78.20 |
| 4 | Յարթակի երեսապատում բազալտե սալերով 30մմ հաստությամբ | մ² | 28.8 | 15.75 | 453.60 |
| 5 | Չոր ցեմեն-ավազային խառնուրդից շերտի պատրաստում H=4սմ, բետոնե սալիկների տակ | մ³ | 0.3 | 18.05 | 5.42 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 6 | Դեկորատիվ սալիկներից ծածկույթի վերականգնում | մ$^2$ | 17.5 | 5.75 | 100.67 |
| 7 | Հարթակի տակ բետոնե շերտի իրականացում B12.5 դասի բետոնից | մ$^3$ | 5.4 | 39.02 | 210.70 |
| 8 | Բետոնե աստիճանների պատրաստում B12.5 դասի բետոնից | մ$^3$ | 0.12 | 51.73 | 6.21 |
| 9 | Բազալտե եզրաքարերի տեղադրում, բետոնե հիմքով /ներառյալ հողային աշխատանքները/ | գմ | 12 | 10.16 | 121.95 |
| 10 | Բազալտե սալերի քանդում | մ$^2$ | 9 | 1.25 | 11.26 |
| 11 | Բետոնե հիմքի քանդում | մ$^3$ | 0.5 | 18.42 | 9.21 |
| 12 | Հին եզրաքարերի ապամոնտաժում | գմ | 10 | 1.03 | 10.25 |
| 13 | Ասֆալտի շերտի քանդում /մայթի/ | մ$^2$ | 10 | 0.07 | 0.70 |
| 14 | Նախապատրաստական շերտի քանդում | մ$^3$ | 1.2 | 0.57 | 0.68 |
| 15 | Մանրապրոֆիլային թիթեղից տանիքածածկի քանդում, ներառյալ կավարամածը | մ$^2$ | 600 | 0.18 | 106.36 |
| 16 | Տանիքածածկի վերականգնում ցինկապատ մանրապրոֆիլային թիթեղից δ=0.55մմ, ներառյալ կավարամածը | մ$^2$ | 600 | 7.81 | 4686.26 |
| 17 | Օդատարի անցկացում ցինկապատ թիթեղից δ=0.5մմ, ⌀150մմ | մ$^2$ | 6.2 | 5.73 | 35.50 |
| 18 | Ճաղավանդակների տեղադրում 150x150մմ | հատ | 5 | 3.44 | 17.19 |
| 19 | Կերամիկական զուգարանակոնքերի տեղադրում ցածր բաքով | հատ | 6 | 29.86 | 179.17 |
| 20 | Կերամիկական լվացարանների տեղադրում սիֆոնով | հատ | 4 | 17.33 | 69.34 |
| | <u>Կոնստրուկտորական մաս</u> | | | | |
| 1 | Ե/բ հիմքերի պատրաստում կանգնակների տակ B22.5 դասի բետոնից | մ$^3$ | 0.6 | 65.65 | 42.01 |
| 2 | ե/բ միաձույլ կանգնակների պատրաստում B22.5 դասի բետոնից | մ$^3$ | 0.66 | 107.47 | 70.93 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 3 | Ամրան Ø8AcI | տ | 0.042 | 416.49 | 17.49 |
| 4 | Ամրան Ø16A500C | տ | 0.075 | 404.38 | 30.33 |
| 5 | Ամրան Ø18A500C | տ | 0.12 | 404.38 | 48.53 |
| 6 | Նոր աստիճանների եւ ծածկի սալի պատրաստում B22.5 դասի բետոնից | մ³ | 5.6 | 70.95 | 397.34 |
| 7 | Ամրան Ø8AcI | տ | 0.04 | 416.49 | 16.66 |
| 8 | Ամրան Ø10A500C | տ | 1.77 | 416.49 | 737.19 |
| 9 | Ամրան Ø16A500C | տ | 0.09 | 404.38 | 36.39 |
| 10 | Ամրան Ø18A500C | տ | 0.07 | 404.38 | 28.31 |
| 11 | Դռան բացվածքի գոտեվորում B22.5 դասի բետոնով | մ³ | 1.15 | 97.23 | 111.81 |
| 12 | Ամրան Ø8AcI | տ | 0.05 | 416.49 | 20.82 |
| 13 | Ամրան Ø10A500C | տ | 0.015 | 416.49 | 6.25 |
| 14 | Ամրան Ø18A500C | տ | 0.16 | 404.38 | 64.70 |
| 15 | Քարե պատերում ակոսների քանդում 25x12սմ | գմ | 5.2 | 3.76 | 19.53 |
| 16 | Անցքերի շաղափում ե/բ կառուցվածքներում Ø20մմ, L=25սմ | հատ | 54 | 1.23 | 66.39 |
| 17 | Անցքերի ներարկում պոլիմերցեմենտե շաղախով | մ³ | 0.005 | 134.21 | 0.67 |
| | **<u>1-2 Ջեռուցում</u>** | | | | |
| 1 | Ջեռուցման ալյումինե մարտկոցների տեղադրում | էքմ | 30 | 0.78 | 23.07 |
| 2 | Ջեռուցման ալյումինե մարտկոցների արժեքը IPS-90/RUS, H=500մմ | սեկ-ցիա | 119 | 5.25 | 624.60 |
| 3 | Ջերմակարգավորիչ կափույր Ø15մմ | հատ | 14 | 2.39 | 33.43 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 4 | Հետադարձ գծի կափույր Ø15մմ | հատ | 14 | 2.31 | 32.39 |
| 5 | Խողովակաշարի անցկացում մետաղապլաստե խողովակներից Ø20x2.25մմ հիդրավլիկ փորձարկումով | գմ | 120 | 1.47 | 176.98 |
| 6 | Խողովակաշարի անցկացում մետաղապլաստե խողովակներից Ø16x2մմ հիդրավլիկ փորձարկումով | գմ | 30 | 1.65 | 49.38 |
| 7 | Օդահան ծորակ Ø8մմ | հատ | 4 | 2.31 | 9.25 |
| 8 | Դատարկման ծորակ Ø15մմ | հատ | 4 | 3.36 | 13.42 |
| 9 | Եռաբաշխիչ Ø20x20x20մմ | հատ | 4 | 1.65 | 6.60 |
| 10 | Եռաբաշխիչ Ø20x16x20մմ | հատ | 26 | 0.93 | 24.24 |
| 11 | Անկյունակ Ø16մմ, 90° | հատ | 14 | 0.57 | 7.97 |
| 12 | Միացման տեղ գործող համակարգին Ø20x2.25մմ | տեղ | 4 | 7.75 | 30.98 |
| 13 | Մարտկոցների կախիչներ | հատ | 28 | 0.55 | 15.42 |
| 14 | Դյուբելներ կախիչների համար | հատ | 56 | 0.01 | 0.74 |
| 15 | Խամութներ խողովակների ամրացման համար | հատ | 268 | 0.03 | 7.08 |
| 16 | Դյուբելներ խամութների համար | հատ | 536 | 0.01 | 7.08 |
| 17 | Անցքի բացում հիմնական պատերում 10x10x50սմ չափերի | հատ | 1 | 5.13 | 5.13 |
| 18 | Անցքերի բացում հիմնական պատերում 10x10x40սմ չափերի | հատ | 2 | 5.13 | 10.27 |
| 19 | Անցքերի բացում միջնորմներում 10x10x20սմ չափերի | հատ | 4 | 0.86 | 3.45 |
| 20 | Անցքերի լցափակում | հատ | 7 | 1.01 | 7.05 |
| 21 | Անցքերի բացում միջհարկային ծածկերում 10x10x30սմ չափերի | հատ | 6 | 1.05 | 6.28 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 22 | Անցքերի լցափակում | հատ | 6 | 1.01 | 6.04 |
| 23 | Համակարգի փորձարկում /12կգ/սմ²/ | գմ | 150 | 0.09 | 13.33 |
| 24 | Շին. աղբի հավաքում, բարձում եւ տեղափոխում 13կմ | տ | 0.07 | 3.32 | 0.23 |
| 25 | Ջեռուցման համակարգի խողովակների ապամոնտաժում ∅20x2.25մմ | գմ | 20 | 0.54 | 10.72 |
| 26 | Միացման տեղում գործող մարտկոցի մատակարար առբերիչի եւ հետադարձի անջատում ու միացում նույն համակարգին ∅20 | տեղ | 4 | 2.35 | 9.39 |
| | 1-3 Կաթսայատան մոնտաժման եւ ապամոնտաժման աշխատանքներ | | | | |
| 1 | Ջեռուցման համակարգի շրջառության պոմպի տեղադրում HF50A Q=3.87մ³/ժամ; H=11ջ.ս.;N=0,55կվտ; n=2900պտ/րոպ | կ-տ | 1 | 19.64 | 19.64 |
| 2 | Մետաղական կցաշուրթերի տեղադրում ∅50մմ | հատ | 2 | 5.48 | 10.96 |
| 3 | Մետաղական խողովակի տեղադրում ∅50x3մմ | գմ | 2 | 2.84 | 5.68 |
| 4 | Համակարգի յուղաներկում յուղաներքում 2 շերտ | մ² | 0.4 | 1.25 | 0.50 |
| 5 | Ջեռուցման համակարգի շրջառության պոմպի ապամոնտաժում | կ-տ | 1 | 4.28 | 4.28 |
| | 1-4 Էլեկտրատեխնիկական մաս | | | | |
| 1 | Պահարան դռնակով ԼՎ վահանակի կոմպլեկտավորման համար (317x240x97) 12 մոդուլի | հատ | 1 | 7.25 | 7.25 |
| 2 | Ավտոմատ անջատիչ եռաբեւեռ 32Ա | հատ | 1 | 2.62 | 2.62 |
| 3 | Ավտոմատ անջատիչ միաաբեւեռ 25Ա | հատ | 1 | 2.26 | 2.26 |
| 4 | Ավտոմատ անջատիչ միաաբեւեռ 16Ա | հատ | 5 | 2.26 | 11.29 |
| 5 | Լուսատու դիոդային 32Վտ առաստաղային (600x600) | հատ | 2 | 12.18 | 24.36 |
| 6 | Լուսատու դիոդային 12Վտ առաստաղային | հատ | 19 | 4.81 | 91.31 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 7 | Լուսատու դիոդային 12Վտ պատի | հատ | 3 | 4.81 | 14.42 |
| 8 | Լուսատու դիոդային 7Վտ կախովի առաստաղի | հատ | 14 | 3.49 | 48.79 |
| 9 | Լուսատու  դիոդային 5Վտ հայելու վերևում տեղադրվող | հատ | 6 | 3.49 | 20.91 |
| 10 | Լուսատու դիոդային 5Վտ առաստաղային | հատ | 4 | 3.49 | 13.94 |
| 11 | Էլ. վարդակ երկբեւեռ հողանցիչով 10Ա, 220Վ | հատ | 6 | 1.72 | 10.31 |
| 12 | Անջատիչ մեկստեղնավոր 6Ա, 220Վ | հատ | 18 | 1.36 | 24.54 |
| 13 | Անջատիչ երկստեղնավոր 6Ա, 220Վ | հատ | 1 | 2.01 | 2.01 |
| 14 | Տուփեր ճյուղավորիչ | հատ | 12 | 0.13 | 1.58 |
| 15 | Տուփեր անջատիչների եւ վարդակների տեղադրման համար | հատ | 20 | 0.10 | 1.98 |
| 16 | ПВ3-1x1.5մմ² հատվածքով, հաղորդալարի անցկացում խողովակի միջով /3 հաղորդալար 100մ/, ընդհանուր երկարությունը - 300մ | գմ | 100 | 0.43 | 42.79 |
| 17 | ПВ3-1x2.5մմ² հատվածքով, հաղորդալարի անցկացում խողովակի միջով /3 հաղորդալար 208.3մ/, ընդհանուր երկարությունը - 625մ | գմ | 208.3 | 0.59 | 123.13 |
| 18 | ПВ3-1x4մմ² հատվածքով, հաղորդալարի անցկացում խողովակի միջով | գմ | 5 | 0.38 | 1.88 |
| 19 | ПВ3-1x2.5մմ² հատվածքով, հաղորդալարի անցկացում տուփախողովակով | գմ | 55 | 0.36 | 20.03 |
| 20 | ВВГ-5x4մմ² հատվածքով, մալուխի անցկացում տուփախողովակով | գմ | 10 | 1.44 | 14.42 |
| 21 | Տուփախողովակ 16x16մմ | գմ | 55 | 0.69 | 38.12 |
| 22 | Ճկախողովակ ∅20մմ | գմ | 270 | 0.43 | 117.37 |
| 23 | Ճկախողովակ ∅32մմ | գմ | 2 | 0.48 | 0.96 |
| 24 | Ակոսների քանդում | գմ | 140 | 0.37 | 51.70 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 25 | Ակոսների փակում | $մ^2$ | 2.8 | 2.45 | 6.85 |
| | <u>Ապամոնտաժման աշխատանքներ</u> | | | | |
| 1 | Առաստաղային լուսատուների ապամոնտաժում | հատ | 10 | 0.34 | 3.40 |
| 2 | Հաղորդալարի ապամոնտաժում | գմ | 200 | 0.12 | 23.63 |
| | ***Ընդամենը*** | | | | 31397.99 |
| | ***Շահույթ 11%*** | | | | 3453.78 |
| | ***Ընդամենը*** | | | | 34851.77 |
| | ***Չնախատեսված ծախսեր 3%*** * | | | | 1045.55 |
| | ***Ընդամենը*** | | | | 35897.33 |
| | ***ԱԱՀ 20%*** | | | | 7179.465 |
| | ***Ընդամենը*** | | | | 43076.79 |
| | <u>Սարքավորումներ</u> | | | | |
| 1 | Ջեռուցման համակարգի շրջառության պոմպի տեղադրում HF50A Q=3.87$մ^3$/ժամ; H=11ջ.ս.;N=0,55կվտ; n=2900պտ/րոպ | կ-տ | 1 | 85 | 85.00 |
| 2 | Պահարան դռնակով ԼՎ վահանակի կոմպլեկտավորման համար (317x240x97) 12 մոդուլի | հատ | 1 | 10.0 | 10.00 |
| 3 | Ավտոմատ անջատիչ եռաբևեռ 32Ա | հատ | 1 | 3.417 | 3.42 |
| 4 | Ավտոմատ անջատիչ միաբևեռ 25Ա | հատ | 1 | 1.042 | 1.04 |
| 5 | Ավտոմատ անջատիչ միաբևեռ 16Ա | հատ | 5 | 1.042 | 5.21 |
| 6 | Հակահրդեհային կրակմարիչներ 11 հատ | | 1 | 176 | 176.46 |
| | ***Ընդամենը*** | | | | 281.12 |
| | ***Չնախատեսված ծախսեր 3%*** | | | | 8.43 |
| | ***Ընդամենը*** | | | | 289.56 |
| | ***ԱԱՀ 20%*** | | | | 57.91154 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | *Ընդամենը* | | | | 347.47 |
| | *Ամբողջը* | | | | 43424.3 |

* Կապալառուն աշխատանքները կատարում է ք. Երևան, Տիգրան Մեծի 4 հասցեում:
**Կապալառուն պարտավոր է պատվիրատուի անունից դիմել Երևանի քաղաքապետարան և ստանալ շինարարության թույլտվություն:

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ ԿԱ ՊԳԿ վարչություն
ք. Երևան, Տիգրան Մեծի 4
ՀՀ ՖՆ աշխ. գործառ. վարչություն
Հ/Հ 900013000113
ՀՎՀՀ 02528489

------------------------------------
Վ.Հարությունյան
(ստորագրություն)
Կ.Տ

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**

«Լուսի-Արեգ» ՍՊԸ
Իրավ. հասցե ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գյուղ Գեղաքար
Գործ. հասցե ք. Երևան, Շիրակի 82
Կոնվերսբանկ ՓԲԸ
Հ/Հ 1930055884650100
ՀՎՀՀ 08805672

------------------------------------
Հ. Մարտիրոսյան
(ստորագրություն)
Կ.Տ

*Հավելված թիվ 1.1*
*« 06 » 06 2018 թ. կնքված*
***ՊԳԿՎ-ԳՀԱՇՁԲ-2018/1** ծածկագրով պայմանագրի*

**Կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործված նյութերի երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջներ**

| Հ/Հ | Նյութերի տեսակները | Երաշխիքային նվազագույն ժամկետ (տարի) |
|---|---|---|
| 1 | Քար | 20 |
| 2 | Մետաղ | 30 |
| 3 | Գաջ | 20 |
| 4 | Ցեմենտ | 20 |
| 5 | Ավազ | 20 |
| 6 | Երեսպատման սալեր | 10 |
| 7 | Խողովակ | 30 |
| 8 | Մալուխ | 25 |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ ԿԱ ՊԳԿ վարչություն
ք. Երևան, Տիգրան Մեծի 4
ՀՀ ՖՆ աշխ. գործառ. վարչություն
Հ/Հ 900013000113
ՀՎՀՀ 02528489

---------------------------
**Վ.Հարությունյան**
(ստորագրություն)
Կ.Տ.

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**

«Լուսի-Արեգ» ՍՊԸ
Իրավ. հասցե ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գյուղ Գեղաքար
Գործ. հասցե ք. Երևան, Շիրակի 82
Կոնվերսբանկ ՓԲԸ
Հ/Հ 193005588465010
ՀՎՀՀ 08805672

---------------------------
**Հ. Մարտիրոսյան**
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված թիվ 2
« 06 » 06 2018 թ. կնքված
ՊԳԿՎ-ԳՀԱՇՁԲ-2018/1 ծածկագրով պայմանագրի

## ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

### ՀՀ ԿԱ ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՇԵՆՔԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

| N ը/կ | Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ | Աշխատանքների կատարման ժամկետը | |
|---|---|---|---|
| | | Սկիզբը | Ավարտը |
| 1 | Ջեռուցման համակարգի խողովակների, սանտեխնիկական և էլեկտրատեխնիկական սարքավորումների ապամոնտաժում. 1-ին աստիճանավանդակ | Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո | 30.06.2018 |
| 2 | Ջեռուցման համակարգի խողովակների, սանտեխնիկական և էլեկտրատեխնիկական սարքավորումների ապամոնտաժում. 2-րդ աստիճանավանդակ | 21.07.2018 | 25.07.2018 |
| 3 | Տախտակամածի տեղադրում և քանդում քանդման աշխատանքների համար 1-ին աստիճանավանդակ | 25.06.2018 | 20.07.2018 |
| 4 | Տախտակամածի տեղադրում և քանդում քանդման աշխատանքների համար 2-րդ աստիճանավանդակ | 26.07.2018 | 07.08.2018 |
| 5 | Կախովի առաստաղի ապամոնտաժում, հատակների և պատերի քանդում, պատերի հին ներկի քերում 1-ին աստիճանավանդակ | 30.06.2018 | 20.07.2018 |
| 6 | Կախովի առաստաղի ապամոնտաժում, հատակների և պատերի քանդում, պատերի հին ներկի քերում 2-րդ աստիճանավանդակ | 26.07.2018 | 07.08.2018 |
| 7 | Դրսի աստիճանների և հարթակի քանդում , ե/բ ծածկի սալի ու հեծանի, բազրիքների ու մուտքի ծածկի ապամոնտաժում | 25.06.2018 | 05.07.2018 |
| 8 | Նկուղում քանդման և ապամոնտաժման աշխատանքներ | 21.07.2018 | 25.07.2018 |
| 9 | Շինաղբի բարձում ինքնաթափ ու տեղափոխում 1-ին աստիճանավանդակ | 30.06.2018 | 01.07.2018 |
| 10 | Շինաղբի բարձում ինքնաթափ ու տեղափոխում 1-ին աստիճանավանդակ | 05.07.2018 | 06.07.2018 |
| 11 | Շինաղբի բարձում ինքնաթափ ու տեղափոխում 1-ին աստիճանավանդակ | 21.07.2018 | 22.07.2018 |
| 12 | Շինաղբի բարձում ինքնաթափ ու տեղափոխում 1-ին աստիճանավանդակ | 25.07.2018 | 26.07.2018 |
| 13 | Շինաղբի բարձում ինքնաթափ ու տեղափոխում 2-րդ աստիճանավանդակ | 07.08.2018 | 08.08.2018 |
| 14 | Դուռ-պատուհանների, լուսամուտագոգերի տեղադրում և դռների երեսապատում 1-ին աստիճանավանդակ | 21.07.2018 | 11.08.2018 |
| 15 | Դուռ-պատուհանների, լուսամուտագոգերի տեղադրում և դռների երեսապատում 2-րդ աստիճանավանդակ | 16.09.2018 | 20.09.2018 |
| 16 | Տախտակամածի տեաղրում և քանդում հարդարման աշխատանքների համար | 21.07.2018 | 05.10.2018 |
| 17 | Միջնորմերի իրականացում թեթև բետոնից նկուղում | 26.07.2018 | 28.07.2018 |
| 18 | Հարդարման և յուղաներկման աշխատանքների իրականացում | 21.07.2018 | 10.10.2018 |

| | | | |
|---|---|---|---|
| 19 | Կախովի առաստաղների իրականացում | 05.08.2018 | 07.09.2018 |
| 20 | Հատակների իրականացում | 05.08.2018 | 15.09.2018 |
| 21 | Տանիքի վերականգնում | 05.08.2018 | 10.08.2018 |
| 22 | Տանիքի վերականգնում | 16.08.2018 | 15.09.2018 |
| 23 | Ֆասադային պատերի երեսպատում սրբատաշ տուֆով | 16.09.2018 | 20.09.2018 |
| 24 | Ջեռուցման, էլեկտրո և օդափոխության համակարգերի իրականացում 1-ին աստիճանավանդակ | 10.08.2018 | 04.09.2018 |
| 25 | Ջեռուցման, էլեկտրո և օդափոխության համակարգերի իրականացում 2-րդ աստիճանավանդակ | 16.09.2018 | 29.09.2018 |
| 26 | Սանտեխնիկական, էլեկտրո և օդափոխության սարքավորումների տեղադրում | 16.09.2018 | 25.10.2018 |
| ԸՆԴԱՄԵՆԸ | | Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո | 25.10.2018թ. |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ ԿԱ ՊԳԿ վարչություն
ք. Երևան, Տիգրան Մեծի 4
ՀՀ ՖՆ աշխ. գործառ. վարչություն
Հ/Հ 900013000113
ՀՎՀՀ 02528489

------------------------------
Վ.Հարությունյան
(ստորագրություն)
Կ.Տ.

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**

«Լուսի-Արեգ» ՍՊԸ
Իրավ. հասցե ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գյուղ Գեղաքար
Գործ. հասցե ք. Երևան, Շիրակի 82
Կոնվերսբանկ ՓԲԸ
Հ/Հ 1930055884650100
ՀՎՀՀ 08805672

------------------------------
Հ. Մարտիրոսյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 3
« 06 » 06 2018 թ. կնքված
**ՊԳԿՎ-ԳՀԱԾՁԲ-2018/1** ծածկագրով պայմանագրի

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Աշխատանքի | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | որից վճարումները նախատեսվում է իրականացնել 2018թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 45611300-1 | ՀՀ ԿԱ պետական գույքի կառավարման վարչության աշխատակազմի վարչական շենքի հիմնանորոգման աշխատանքներ | | | | | | 17420000 | 23140000 | 23140000 | 23140000 | 25999998 | 25999998 | 25999998 | 25999998 |

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*
*** հրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ*

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ ԿԱ ՊԳԿ վարչություն
ք. Երևան, Տիգրան Մեծի 4
ՀՀ ՖՆ աշխ. գործառ. վարչություն
Հ/Հ 900013000113
ՀՎՀՀ 02528489

---------------------------
**Վ.Հարությունյան**
(ստորագրություն)
Կ.Տ.

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**

«Լուսի-Արեգ» ՍՊԸ
Իրավ. հասցե ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գյուղ Գեղաքար
Գործ. հասցե ք. Երևան, Շիրակի 82
Կոնվերսբանկ ՓԲԸ
Հ/Հ 1930055884650100
ՀՎՀՀ 08805672

---------------------------
**Հ. Մարտիրոսյան**
(ստորագրություն)
Կ.Տ

*Հավելված թիվ 4*
*« 06 » 06 2018թ. կնքված*
*ՊԳԿՎ-ԳՀԱԾՁԲ-2018/1 ծածկագրով պայմանագրի*

Պայմանագրի կողմ

«Լուսի-Արեգ» ՍՊԸ
Իրավ. հասցե ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գյուղ Գեղաքար
Գործ. հասցե ք. Երևան, Շիրակի 82
Կոնվերսբանկ ՓԲԸ
Հ/Հ 1930055884650100
ՀՎՀՀ 08805672

Պատվիրատու

ՀՀ ԿԱ ՊԳԿ վարչություն
ք. Երևան, Տիգրան Մեծի 4
ՀՀ ՖՆ աշխ. գործառ. վարչություն
Հ/Հ 900013000113
ՀՎՀՀ 02528489

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
## ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

*« » « » 20 թ.*

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ «Պետության կարիքների համար ՀՀ ԿԱ պետական գույքի կառավարման վարչության աշխատակազմի վարչական շենքի հիմնանորոգման աշխատանքների կատարման» պետական գնման պայմանագիր
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «__________________» 2018 թ.
Պայմանագրի համարը՝ *ՊԳԿՎ-ԳՀԱԾՁԲ-2018/1*
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 2018թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

| N | Կատարված աշխատանքների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | | |
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց

______________________
ստորագրություն

______________________
ազգանուն, անուն
Կ.Տ.

Աշխատանքը ընդունեց

______________________
ստորագրություն

______________________
ազգանուն, անուն
Կ.Տ.

*Հավելված 4.1*
*« 06 » 06 2018 թ. կնքված*
*ՊԳԿՎ-ԳՀԱԾՁԲ-2018/1 ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ________________-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և ____________-ի
Պատվիրատուի անունը Կապալառուի անունը
(այսուհետ՝ Կապալառու) միջև 20 թ. ____________________________-ին կնքված N ____________________
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. ________-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

| Աշխատանքի | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

КОՂՄԵՐԸ

**Հանձնեց**

______________________
ազգանուն, անուն

______________________
ստորագրություն

**Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

______________________
ազգանուն, անուն

______________________
ստորագրություն